**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 սեպտեմբերի 2024թ. թիվ 653-Ա

## Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին հավելվածի 7-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի 9-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի օգոստոսի 26-ի N ԳՄ/17.3/27422-2024 և ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալի 2024 թվականի օգոստոսի 29-ի N 1105/45328-24 գրությունները, հաշվի առնելով Թայյուանի Էներգիայի և ցածրածխածնային զարգացման ֆորումի կազմակերպչական կոմիտեի 2024 թվականի հունիսի 24-ի հրավերը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Լոռու մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյանին ս/թ սեպտեմբերի 9-ից 12-ը ներառյալ թույլատրել մասնակցելու ՉԺՀ-ի Շանսի նահանգի Թայյուան քաղաքում կայանալիք «Էներգիայի և ցածր ածխածնային զարգացման» խորագրով ֆորումին:
2. Հ.Ավետիսյանի՝ ՉԺՀ-ի Շանսի նահանգի Թայյուան քաղաք մեկնման հետ կապված ծախսերը հոգում է հրավիրող կողմը:
3. Հ.Ավետիսյանին՝ վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում այցի արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնել Լոռու մարզպետին և ՀՀ արտաքին գործերի նախարարություն:

Recoverable Signature

X
Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081
2024-09-06 17:47:31 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Signed by: GHAZARYAN ARAM 2003720081 Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 6
ք.Վանաձոր